

ըստ Պապիասայ՝ «աշխիւրթ Գեորգ» էր, Ըստ
բախտի ուրեմն մեր գտած «Արեւոյն երկն»-ը,
խորագրիւր նշանաւոր Հաստատութիւն մը կ'ըլ-
լայ Եւսեբիոսի՝ Պապիասայ վրայ գրած գլխուն
եւ անոր Պապիասէն ըրած կոչմանց: Ասպիսի
Հաստատութիւն մը կը քաջալիւրէ զմեզ վստա-
հանալու Պապիասայ չորս աւետարանաց գրուե-
լու կերպին եւ. անկող Հեղինակաց վրայ տուած
տեղեկութեանց: «— Քանի մը կէտերուն վրայ որ
զուտ գրական (biblique) խնդիրներ են, աւելի
խափէ Հոս մեր նպատակէն դուրս է:

Ի վերջոյ աւելցնենք որ Հայագէտս մա-
տերս Տրատարական է բաւական ստուար մա-
տեան մ'որ կը բովանդակէ Հայերէն շատ մը
վկայաբանութեանց անգղիերէն թարգմանու-
թիւնքն, եւ յօդուած մ'այ Արիստիդէսի Հայ
աստիճապրութեան մէջ ունեցած գրից վրայ:
Ատոնց վրայ Հոս չենք խոսիլ՝ առձեռն չունենա-
լով պիտի գանձեր, ¹ ուստի ուրիշ առթիւ կը թո-
ղուենք: Կցենք Հոս որ Արիստիդէսի եւ Եզնկայ
աղբերան վրայ գրած է յօդուած մ'այ Հայա-
գէտն ֆելթթեր, ² ծանօթացնելով թերթիս
մէջ Վ. Հ. Գրիգորիս Վրդ-ի Եզնկայ վրայ
գրածները: Զայս ալ անցողակի միայն կը յիշենք
Հոս. ամբողջական Հաստուածը գրած ենք (Հտծ.
ԺԳ) ֆելթթերի Հայկական աշխատարկութեանց
մէջ, որ ի մի Հաւաքուած եւ թարգմանուած
լըստ տեսան այս օրերս: ³

(Հորանս-իւն):

Հ. Ե. Յ.



Ն Կ Ա Ր Զ Ա Վ Ա Ն

ԳՈՅՆԵՐՈՒ ԲՈՂՈՒԹԻՒՆՆ ԸՍՏ ՀՆՈՑ

Պր. Ս. ԱՆԻՇԵԱՆԻ քով կայ բոլորգիր ծնողքի մը
կորստը ազատած մը միմա թուղթը, որ վստահէ նկար-
չական զոյնքով քաղաքագրութեան ծղանկալը: Սյուտով կը
նշատարալինց ամենայն ճշդութեամբ: Խմբ:

... որ է թանի անձոն որպէս արկանես ի
ժանգառն. թող որ Տանգէի կոնէլ արկ եւ գրէ:
Զառնին աղայ. կաղնի մոխրի ջրովն որպէս զն-
ջուֆն լուայ քաղցր ջրով. կոնէլ արկ եւ գրէ:
Զուկի զառնին աղա լաւ մանր, գեղնախուկ
խառնէ եւ գրէ: Զսիւիկոն ձուի գեղնուցով

¹ Զատնք Տարեւածի միայն կրցանք տեսնել զկո-
նական մը քով:

² P. Vetter, Aristides-Citate in der armenischen
Litteratur: Theologische Quartalschrift (Tübingen) 1894,
IV, p. 522-539.

³ Հայկական աշխատարկութիւնք ֆելթթերի, Վիեն-
նայ. Միտիթ. 1895. 80 202 էջ. Վ. Լլգ. Կառնապարտեմ Ժեյ:

յարդ. կոնէլ արկ եւ գրէ: Առ զաֆրան եւ թրթէ.
եւ կտառով քամէ. առ զլուրն ու դեր ի կրակն
որ փոքր մի թանձրանայ. կոնէլ արկ եւ գրէ:
Զտաշիղ զառնին խառնէ ի զնջուֆն արկն ի:
Ճընիւրակն որ է քար զառնին. աղայ նարնջի է:

Վրաս կանոնը ղեղարդաց:

Առ զառնին ի Հաւանն լեւծ մանր, եւ աղայ
ի վերայ մարմար սալի. եւ զլեղանք քիչ քիչ ի
վերայ ած. եւ զսամին նուան ջրով տորէ, յարդ
եւ գրէ: Առ զազնիւ ժանգառն եւ զաֆրան քաց-
նով թրթէ. եւ այն քացնովն աղայ, ձուի գեղ-
նուցով խառնէ եւ գրէ: Զժանգառն քացնով եւ
կոնիզաջրով յարդ, եւ սակաւ մի պախրի լեղի եւ
զաֆրան քիչ լեւծ եւ խառնէ եւ գրէ: Առ ձուի
գեղնուց եւ գեղնին արջասպանջուր եւ ժանգառ.
յամեն մէկէ մանն մի եւ դիր յարեւն որ չորանայ.
կոնիզով յարդ եւ գրէ: Զսպիտաձն ի կանանչ
խառնէ լաւ է. կոնէլ արկ եւ գրէ: Զկանանչ ու
զսպիտաձն ու զազնիւրդն խառնէ չինի է:
Զժանգառն ու սպիտաձն խառնէ չինի է. արկ
քացան եւ սմիղաջուր յարդ եւ լեղակ երես դիր:

Վրաս լալի գոռն ղեղարդաց:

Երբդան փայտն որ է պաղամն առ եւ լաւ
մանրէ որպէս թարրի եւ եփէ ջրով որ . դ. մէկ.
մընայ. սակաւ կիր ձրգէ. կոնէլ արկ: Դարձեալ
զորդան փայտնեփէ քաջ. բարձրակ եւ կամ կալէ
քար. արկ ի թֆրս սամիղով բան աղայ: Առ
տաճիկ լեղակ . մէջափ. եւ. թ. չափ որդան փայտ
մանրէ որպէս ծարիր. եւ ջուր արկ . ք. աւր յա-
րեւն դիր. կոնէլ արկ եւ գրէ: Առ չորս չափ
գիւթոր. եւ չորս չափ կարմիր գինի. եռացոյ. եւ
. է. աւր թաղէ լաւ լինի: Առ գինի . գ. չափ.
գղձոր . գ. չափ. տաւրուն . ա. չափ ի միասին
եփէ. կոնիզէ եւ գրէ: Զտաւրուն կեղեւէ եւ աղայ
լաւ եւ կարմիր գինով եփէ քաջ. լեղակ խառնէ
քամէ կոնէլ արկ եւ գրէ:

Նոնպէս Պր. Ս. ԱՆԻՇԵԱՆԻ ուրիշ մէկ նմազոն
ծնողքին մէջ, ուր կան այլեւայլ զարդագրերու ժողո-
վածոյք, կայ նետմիայն գրուած:

յոջ լըզն. կնն-թւ. կրմի. ճնրկ: այս . դ. դեղս
սեկոյ աստառ է քանի զընուրֆն շատ աղա հան
որ քարին քարն ՀՀամնի որ դգոյն չաւերէ լաւ է:

